

ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽՂԻՐՆԵՐԸ

Մինչ բուն նյութին անցնելը, մի մեջբերում անենք. «Նախղիրները, ինչպես շատ մը քոյր լեզուներու, Հայերենի մէջ ալ մեծ դեր կը կատարեն խօսքին ու գրութեան ձևերու պէսպիսութիւն, ճկունութիւն, ներդաշնակութիւն եւ կուռ ու ամփոփ հանգամանք մը տալու համար: Կարելի է ըսել, որ լեզուի ճոխութեան ու գեղեցկութեան գաղտնիքը կը գտնուի անոնց պատշաճ ու ճարտար գործածութեան մէջ»¹: Թվագրությամբ վաղեմություն ունեցող սույն մեջբերումը, մեր կարծիքով, արդիական է նաև այսօր, ու թէև նույն արդիականությամբ կամ լեզվի բնականոն զարգացմամբ պայմանավորված՝ ժամանակակից հայերենի քերականական այս կամ այն երևույթ կամ կարգ փոխում է իր բնույթը, ուստի հստակեցման անհրաժեշտություն է ծնվում. տվյալ դեպքում խոսքը հայերենի նախղիրների մասին է՝ ինչ է նախղիրը. առդրություն (կապ), նախադրություն, առընթերադրություն, նախածանց, թե նախղիր-նախածանց և ինչպիսի գործառույթներ է կատարում խոսքում և ո՞ր խոսքի մասին է պատկանում այն: Բացի այդ, պարզաբանման կարիք ունի, թե հայերենի գրական երկու տարբերակներից որում է այս կամ այն նախղիրն ավելի կամ պակաս արգասավորությամբ կիրառվում:

Հայերենի զարգացման գրաբարյան ժամանակաշրջանից առ այսօր իբրև նախղիրներ վկայվում են հետևյալ վեցը՝ առ-, ընդ-, ըստ-, ի(յ)-, գ-, ց-, որոնց հատուկ անդրադարձ կա հայերենի քերականությանը, ի մասնավորի՝ բառակազմությանը նվիրված բոլոր գիտական և ուսումնական աշխատություններում: Այսպես, Եդ. Տասնապետյանը² իր «Քերականություն» դասընթացում գրում է. «Առընթերադիր կը կոչենք այն անփոփոխ բառերը, որոնք հոլովեալ անունի մը հետ կապակցաբար կը կազմեն նախադասութեան լրացուցիչ մէկ անդամը՝ ընդհանրապես ցոյց տալով պարագայական զանազան յարաբերութիւններ բային հետ³, և ապա, էջ 19-ում նշում, որ «...խոսքի բաղադրիչ տարրերու այս տեսակը գրաբարի քերականութեան գրքերուն մէջ կոչուած է «նախադրութիւն». անուանում մը, որ նոյնությամբ փոխանցուած է աշխարհաբարի դասագիրքերուն: Գրաբարի մէջ (ինչպէս ֆրանսերէնի՝ preposition) այս անուանումը ընհանուր առմամբ կը համապատասխանէ տեսակին շարադասական դիրքին իր խնդրին նկատմամբ: ... Արդ՝ Աբեղեան, ուզելով մէկդի նետել տեսակին լոկ շարադասական դիրքին

¹. Տե՛ս Ն., Պայքար օրաթերթ, Ա. տարի, թիւ 205, 1 Մեպտ., Պոստըն, 1923, էջ 4:

². Արևմտահայերենի քերականության հարցերին անդրադառնալիս օգտվել ենք ինչպես առանձին հեղինակների, այնպես էլ Ա. Ֆիշենկճեանի՝ «Արևմտահայերենի քերականութեան պատմութիւն» աշխատությունից, ուր մեկտեղված և զուգադրաբար քննված են հետախոսական շրջանի բոլոր քերականությունները:

³. Տե՛ս Եդ. Տասնապետեան, Քերականութիւն, Կիլիկիոյ կաթ. Տպ., Անթիլիաս, 1990, էջ 82:

ակնարկող այս ձեւական անուանումը եւ անոր տալ իր շարահիւսական առանձնայատկութեան համապատասխանող անուն մը՝ յարմար գտած է կոչել զայն **կապ**»:⁴ Իր՝ նշված դասընթացի մեջ առանձնացնելով խոսքի մասերը՝ Եղ. Տասնապետյանը առընթերադիրներն ու շաղկապները դնում է նույն՝ **կապակցական տեսակներ** խոսքի մասի մեջ:⁵ Համանման տեսակետն ունի Մ. Մկրտիչյանը. «Այն անթեք բառերը, որոնք գոյականին առընթեր դրուելով զայն կը վերածեն պարագայական խնդրի, կը կոչուին առընթերադրութիւն»⁶:

Յ. Չոլաքյանը, իր մի ուսումնասիրության մեջ⁷, անդրադառնալով չթեքվող խոսքի մասերին՝ գրում է. «Կապ (հոլովառու, առընթերադրութիւն, նախադրութիւն) խոսքի մասին մեջ կը մտնեն այն բառերը, որ կը գործածուին գոյականին ու դերանուններուն հետ ու անոնց կու տան հոլովական իմաստ մը, ճիշդ այնպէս ինչպէս պիտի ընէր հոլովական մասնիկ մը», ապա, ըստ գործածության տեղի՝ դրանք բաժանում նախադրությունների և ետադրությունների՝ առաջինների մեջ թվարկելով առ-ը և ի – ն, «անտեսելով» ընդ –ը: Ըստ տեսակների ու քերականական իմաստների հեղինակն առանձնացնում է կապերի երեք տեսակ՝ իսկական կապեր, անիսկական կապեր և կապական բառեր՝ ի-ն և առ-ը, իսկ ընդ-ը՝ ընդդէմ ձևով դնելով իսկական կապերի մեջ և պարզաբանում, որ իսկական կապերը արդի լեզվում միշտ ու միայն կապի գործառույթով են հանդես գալիս⁸:

Գ. Ջահուկյանի կարծիքով «Ժամանակակից հայերենում հին հայերենի նախդիրների համակարգը չի պահպանվել ... ընդհակառակը, աշխուժացել ու լրացվել են, այսպէս կոչված, նախադրությունները, որոնց կապը նյութական խոսքի մասերի հետ ավելի ակնհայտ է, և ձևական ու առարկայական իմաստների խզում գրեթէ չկա: Եվ իրոք, ժամանակակից հայերենի առդիրների համակարգը ներկայացնում է մի **բազմաշերտ և տարասեռ** ամբողջություն, որի անդամները իմաստով հարաբերակից են նյութական խոսքի մասերին և հաճախ տարբերվում են նրանցից միայն գործառույթամբ»⁹:

Ըստ Լ. Հովսեփյանի՝ գրաբարի երեք խմբերի բաժանված նախածանցներից «...երկրորդ խմբի՝ նախդիրներից առաջացած նախածանցները՝ **առ-**, **ընդ-**, **ըստ-**, **ի(յ)**, **զ-**, **ց-**, նույնպէս գործառական բեռնվածության տեսակետից նույնարժեք չեն: Նախածանցների դերում ավելի գործածական են առ- և ընդ- նախդիրները, որոնցով կան ինչպէս ավանդաբար ժառանգված, այնպէս էլ նոր կազմություններ: Ինչ վերաբերում է ըստ-, ի(յ), զ-, ց- **նախդիր-նախածանցներին**, ապա պետք է ասել, որ 5-

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 19:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 17:

⁶ Տե՛ս Մ. Մկրտիչյան, Քերականութեան դասեր, Բ. Գիրք, (Նախակրթարանի Ե.-Ձ. Կարգերուն համար), Բ, տպագրութիւն, Հալէպ, 1962, էջ 127:

⁷ Յ. Չոլաքյան, Արեւմտահայերենի կանոնարկման հարցեր (Չթեքուող խոսքի մասեր), Ե., ՀՀ ԳԱԱ, Գիտութիւն, 2018, էջ 14-27:

⁸ Նույն տեղը՝ էջ 14-15:

⁹ . Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Ե., 1989, էջ 102-103:

րդ դարում նրանք արդեն գործուն չէին և բաղադրությունների կազմում ճանաչվում են անկախ գոյություն ունեցող հիմքերի (պարզ արմատների) կամ հեշտությամբ տրոհելի այլ բաղադրիչների հակադրությամբ (**առաջ-յառաջ, երկար-յերկար, սպառ-խսպառ, արձակ-յարձակ, այգ-ցայգ, անկ-ցանկ** և այլն), իսկ երբեմն նույնիսկ լրիվ ձուլվել են հիմքին և տրոհելի են միայն ստուգաբանորեն՝ **ըստ գտանել, անստգետ, զգեստ, զարմ, զանխուլ** և այլն»¹⁰:

Մ. Ասատրյանն իր «Ժամանակակից հայոց լեզու» ուսումնական ձեռնարկում¹¹ խոսելով կապերի մասին, գրում է. «Հայերենի կապերի մի մասը գալիս է դեռևս մեր լեզվի պատմության վաղնջական շրջաններից, ծագմամբ հնդեվրոպական է և իր զուգահեռներն ունի ազգակից մյուս լեզուներում: Անցնելով պատմական զարգացման երկար ուղի՝ այսպիսի կապերի մեջ զարգացել են վերացական նշանակություններ, և նրանք իրենց արտահայտած ընդհանուր իմաստներով մոտավորապես հավասարվում են հոլովական ձևերին: Այսպես են, օրինակ, գրաբարյան Ի, Յ, ԱՌ, ԸՍՏ, ԸՆԴ, Զ նախդիրները, որոնք բոլորն էլ, բացի Զ-ից, որի ծագումն անհայտ է, գալիս են հնդեվրոպական հիմնալեզվից և այս կամ այն չափով կենդանի են ու գործածուն արևելահայ ու արևմտահայ գրական լեզուներում կամ բարբառներում»¹²: Հեղինակը խնդրո առարկա վեց նախդիրները թվարկում է կապերի մեջ՝ դրանցից 3-ը՝ **առ, ըստ, ի՛** իբրև դիրքային կամ շարադասական տարատեսակ առանձնացնելով որպես նախադրություններ¹³, այլև նույն երեքը, ըստ կապերի կազմավորման աստիճանականության՝ դասակարգում որպես իսկական կապեր¹⁴: Այսինքն, սրանք կապեր են և նախադրություններ:

Ինչպես տեսնում ենք, առաջ քաշված հարցերն աստիճանաբար սկսում են պարզորոշվել. Մ. Աբեղյանին հետևելով՝ թվարկված նախդիրներն ընդգրկվում են **կապ** խոսքի մասի մեջ (ըստ որում՝ մասամբ նաև արևմտահայերենի նորագույն այն դասընթացներում և գիտական ուսումնասիրություններում, որոնց հեղինակներն իրենց բարձրագույն կրթությունն ստացել են հայրենիքում):

Հարկ ենք համարում անդրադառնալ նախդիրներից յուրաքանչյուրին՝ ցույց տալով դրանց գործուն մասնակցությունը խոսքում, ընդ որում՝ նաև արևելահայերենում (արևմտահայերենում դրանք լայնորեն գործածվում են):

Էդ. Աղայանի «Արդի հայերենի առձեռն բացատրական բառարանում» **ի** նախդիրի մասին կարդում ենք. «գրաբարյան նախդիր, որ արդի հայերենում մեծ մասամբ գործածվում է քարացած կապակցությունների մեջ, բայց իմաստային որոշ առումներով այժմ զգալիորեն կենսունակ է դառնում.... Արդի լեզվում ոչ քարացած կապակցությունների մեջ առավել կենսունակ նշանակություններն են. 1.

¹⁰. Տե՛ս Լ. Մ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987, էջ 161:

¹¹ Տե՛ս Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Երևանհրատ, Ե., 2002, էջ 363:

¹². Տե՛ս նույն տեղը:

¹³. Տե՛ս նույն տեղը, էջ 367:

¹⁴. Տե՛ս նույն տեղը, էջ 369:

Նպատակային իմաստով՝ համար, իբրև: 2. Շարժման ուղղության իմաստով՝ դեպի: 3. (ժղ) Հանգման իմաստով՝ մինչև»:¹⁵

Բառահոդվածն ինքնին երկիմաստ է, մանավանդ որ ստորև բերված օրինակներն էլ դա են ապացուցում (այստեղ ակնհայտ է արևելահայերենում **ի** նախածանցի՝ նրան հաջորդող բառի հետ հոծ գրվելու միտումը, թեև հանդիպում են անջատ գրություններ ևս). **ի** բնե, **ի** դեմս, **ի** դեպ, **ի** դերև, **ի** գատ, **ի** զարմանս, **ի** զեն, **իզուր**, **ի** թիվս, **ի** լրումն, **ի** լուր, **ի** խնդիր, **ի** խրատ, **ի խորոց սրտի**, **ի** կատար, **ի** կատարումն, **ի** հակակշիռ, **ի** հաշիվ, **իհարկե**, **իսպառ**, **ի հեճուկս**, **ի** մի→**ի** մի բերել, **ի** մի զալ, **ի** մի գումարել, **ի** միջի այլոց, **ի** մոտո, **ի մտո**, **ի նշան**, **ի շահ**, **ի մոտո** ¹⁶ (իմանալ), **ի** ներքո, **ի** սրտե, **ի** վերջո, **ի** վիճակի, **ի** տես, **ի** ցույց (30 օրինակ, որոնցից չորսը՝ նորաստեղծ), **ի** սեր, **ի** սպաս, **ի** տրիտուր(վասն)/ **ի** տրիտուր նահատակներու արեամբ/: Այսինքն, թեև քարացած կապակցություններում է օգտագործվում, սակայն «իմաստային որոշ առումներով այժմ զգալիորեն կենսունակ է...»¹⁷: Մեր սովյալներով՝ կենսունակ է, ընդ որում՝ երկու գրականներում, ու թեև արևմտահայերենի դասագրքերում հարցը տարբեր եզրերով ու մեկնաբանությամբ է ուսուցանվում ¹⁸ , սակայն արևմտահայ մամուլի ու գրականության էջերում նախդիրների գործածության բազմաթիվ նմուշներ կան՝ *Իտալական կողմը համակողմանիօրեն քաղաքական մատուցում կը կատարե, այս բոլոր ուղղակի եւ անուղղակի ուղերձները հրամցնելով հայկական կողմին՝ առ ի օգտագործում* (Ազդակ օրաթերթ, 12 ապրիլի, 2019, 8:45 AM): Տեղին է յիշել որ Տիկին Լեփեճեան եւ իր ընտանիքը նուիրեալ աշխատանք կը տանին **ի նպաստ** Հայ եկեղեցւոյ մանաւանդ Սուրբ Յարութին եկեղեցւոյ, իրենց ծառայութիւնը բերելով երգչախումբերու մէջ (Փարոս, Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի առաջնորդարանի լրատու, թիւ 23 – Յունիս, 2019): Նրանք այդ հավաքն իրականացրել են Շահումյանի հրապարակում, **ի** դեպ, հրաժարվել են տոնական երթից, **ի հարգանս մարտի 1-ի զոհերի** հիշատակի, նրանք կոչ են արել՝ ժողովրդին չզրկել խոսքի ազատությունից եւ մարդկանց չդատել իշխանություններին քննադատելու համար, որովհետեւ նրանք հոսուրբ չեն եւ ասել են, որ համատարած դատավարության երկիր ենք դարձել, ու որ էլ 37-ի անուն չտանք, պակասն էլ մենք չենք հիմա (Ազգ, 2008.05.06):

¹⁵ . Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան, Լ. Հովսեփյանի խմբագրությամբ, ՄԱՆՄԱՐ, Ե., 3014, էջ 437:

¹⁶ . Ի մոտո գիտեմ իմ դեկավարած ոլորտը,- Հանրային հեռ. եթերով ասում է մշակույթի փոխնախարար Արա Խզմայյանը (8. 2-րդ, 2020):

¹⁷ Տե՛ս նույն տեղը:

¹⁸ Չ. Չոլաքյանն, օրինակ, ինչպես իր հեղինակած դասագրքերում (Հայերենի դասընթացը համազգայինի լսարանի, Հալեպ), այնպես էլ գիտական ուսումնասիրություններում՝ Արեւմտահայերենի կանոնարկման հարցեր (Չթեքուղ խօսքի մասեր), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն», 20018 և Արեւմտահայերեն (կանոնակարգ եւ խնդիրներ), Բ. Գիրք, Ե., Ստոդիկ, 20019), խոսելով Կապ խոսքի մասին, իբրև **կապ (հոլովառու, առընթերադրութիւն, նախադրութիւն)** և «Ըստ գործածութեան տեղի առանձնացնելով նախադրութիւններն ու յետադրութիւնները, առաջինների մէջ թվարկում է նաև **առ, ի, ըստ** կապերը» (Արեւմտահայերենի կանոնարկման հարցեր (Չթեքուղ խօսքի մասեր), էջ 15), ապա կապերի տեսակներն ու քերականական իմաստները քննելիս զատելով իսկական և անիսկական կապերը՝ իսկականների մէջ նշում է **ի** և **առ** կապերը (նույն ուսումնասիրությունը, նույն էջը):

Նախորդ առցանց Հայերենի ուղղագրիչ բառարանի բոլոր արևմտահայերենի բառարանները վկայում են, որ « *h* նախադրությունը հին լեզվում ընդարձակ գործածություն է ունեցել, կազմելով հոլովներ (20-ից ավելի իմաստներով) ու շատ դարձվածքներ»¹⁹ : Գնել արքեպիսկոպոս Ճերեճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեանի Հայոց լեզուի նոր բառարանի էջ 727 ում վկայված է, որ « *h* գիրը, իբրև նախդիր, տեսնում ենք գրաբարյան հոլովումների մեջ, նաև իբրև նախամասնիկ (prefixe) ինչ- ինչ բառերի սկզբում՝ աջող = յաջող, աւելի = յաւելուլ, ածիլ = յածիլ և այլն. ապա բերվում են նախդրային բոլոր գործածությունները»²⁰: Այստեղ ևս տերմինային հստակ տարբերակվածություն չկա՝ նախադրություն, նախամասնիկ, թե՛ նախդիր: **h** նախդիրը, ինչպես տեսանք վերը բերված օրինակներից մեկում, գործածվում է նաև **առ h** գուգորդությամբ՝ « ... **Առ h** տեղեկություն մեր յարգոյ յաճախորդներունէ կը յայտնենք ... »²¹ : Այսինքն, **h** նախդիրի կիրառության բազմազանությունը, հաճախականությունն ու օրինակների հարստությունը այլևս անհերքելի է (ԱՐԵՎԱԿ ազգային կորպուսում այն հանդիպել է 202 616 համատեքստում՝ արձակ, չափածո, բնագիր, թարգմանական և այլ բնույթի): Հավելենք, որ **h** նախդիրը նաև բառամիջում է հանդիպում՝ կապելով բառահիմքերը, ինչպես՝ **հնիհն, օրնիբուն, լեռն h վեր, լեռ h վար**:

Առ նախդիրը մանրամասն ներկայացված է «Նոր բառգիրք հակազեան լեզուի» բառարանում²² նախ որպես նախդիր՝ **առ** և **առ h** ձևերով՝ դեպի, մերձ, ընդ իմաստներով՝ Եկին առ նա, Ասէր առ աշակերտսն և այլն, ապա՝ որպես նախադրություն (առանձին գլխաբառերով), առընթեր բոլոր հոլովների²³:

Էդ. Աղայանի բառարանում²⁴ **առ** նախադրությունը (հին) նշումով «գործածվում է սակավաթիվ կապակցությունների մեջ՝ դեպի, մինչև, համար նշանակություններով և կրկնությունների մեջ՝ փողոց առ փողոց, տուն առ տուն, կաթիլ առ կաթիլ և այլն»²⁵:

Այս կապի պարագայում ևս պետք է փաստենք, որ այն խիստ պահանջված ու գործածական է (հաճախական է ուղղական և հայցական հոլովների հետ երկու գրականներում՝ առ Քրիստոս, Աղօթք առ Աստուած, Թուղթ առ Երեւան և այլն). հանդիպել է 18 782 համատեքստում, ինչպես արևելահայերեն, այնպես էլ արևմտահայերեն. այն հատկապես հաճախական է ժամանակ ցույց տվող բառերի հետ նախադաս դիրքում՝ **առ** 1-ը մայիսի, **առ** այսօր, **առ** այժմ, **առ** ժամ, **առ** ժամանակ, **առ** հավետ

¹⁹ Ի մասնավորի տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Հ ՄՍՌ Պետհրատ., 1944, հ. 2, էջ 149:

²⁰ . Տե՛ս , Գնել արքեպիսկոպոս Ճերեճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, Կ. Տօնիկեան եւ Որդիք Հրատարակչատուն, Պէյրոս, 1992, էջ 727:

²¹ Տե՛ս Յ. Չոլաքեան, Արեւմտահայերենի կանոնարկման հարցեր (Չթեքուող խօսքի մասեր), Եր., ՀՀ ԳԱԱ, Գիտութիւն, 2018, էջ 20:

²² Տե՛ս , Նոր բառգիրք հակազեան լեզուի, հ. 1, Եր., ԵրՀամՀրատ, 1979, էջ 281:

²³ Տե՛ս , նույն տեղը:

²⁴ Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976, էջ 100:

²⁵ Տե՛ս նույն տեղը:

²⁶ Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976, էջ 109

(Չնայած ցեղասպանության հարցը շատ է շրջանառվել, **առ** այսօր մնում են հիմնավոր ման ու ճշգրտումների կարիք զգացող բազում հիմնահարցեր (Ազգ, 2004.05.06)), իսկ **առ այն** կապակցությունը հաճախադեպ ու սովորական է հատկապես պաշտոնական գրություններում (Պատկառելի գիտնականների հնչեցրած ահազանգին գումարում ենք մեր ցավն ու ափսոսանքն **առ** այն, որ գիտխորհրդի նիստը հիշեցնում է անցյալ դարի ... (Ազգ, 2003, 12. 23)): Ըստ որում, ինչպես վերոնշյալ օրինակներն են փաստում, **առ**-ը նաև բառամիջյան դիրքում է գործուն ` անուն առ անուն, բառ առ բառ, դեմ առ դեմ, կետ առ կետ, մեկ առ մեկ (մի առ մի), ժամանակ առ ժամանակ, տուն առ տուն, փուլ առ փուլ, քայլ առ քայլ, շիթ առ շիթ, շարք առ շարք և այլն (Լ. Գեւորգյանը մեկ **առ** մեկ մեզ ցույց տվեց արմատախիլ եղած պտղատու ծառերը (Առաւօտ, 2007.09.08)):

Վատնել եմ օրերս անփույթ,

Օրերս, որ անդարձ թռան,

Ժամերս ծվեն **առ** ծվեն

Բաժանել սրան ու նրան (Սահյան Համո, Բանաստղծություններ, մաս 1):

Վարժարանի տնօրէնուհի տիկին Հուրի Պոյամեանը անդրադարձաւ դպրոցի յաջողութիւններուն, Պաշտօնական Քննութիւններուն աշակերտներուն բերած բարձր արդիւնքները (որոնք կը դասուին Ամերիկայի ամենէ բարձր 10 **առ** հարիւրին մէջ ըլլայ լեզուի եւ ըլլայ թուաբանութեան մէջ), ինչպէս նաեւ դպրոցի արդիւնաբեր աշխատանքները... (Հայրենիք, 2006.07.14):

Առ-ը հանդիպել է նաև նորակազմություններում՝ «Մինչդեռ Սփյուռքի խորհրդամետ քաղաքական կուսակցություններն ու հայոց եկեղեցին, թեև գտնվում էին ԽՍՀՄ քարոզչական մեքենայի ազդեցության ներքո, այնուհանդերձ, **երբեմն առ երբեմն** փորձում էին դրսևորել ինքնուրույնություն»²⁷:

Ըստ և ընդ կապերից երկրորդը գործ է ածվում բոլոր թեք հոլովների հետ՝ զանազան նշանակություններով՝ տակ, ստորին, ցածր, փոխաբեն, հետ, միասին՝ հաջորդող բառի հետ ինչպես հոծ, այնպես էլ անջատ գրությամբ՝ ընդ միշտ – ընդմիշտ, ընդ որում – ընդորում, ընդ սմին – ընդսմին, ընդդեմ և այլն²⁸: Շատ դեպքերում, հոծ գրությամբ, չի էլ գիտակվում կապի առկայությունը այդ բառերում ու դրանց ածանցյալներում՝ ընդգծում, ընդառաջ, ընդարձակ, ընդդեմ, ընդհանուր, ընդհարում, ընդհատ, ընդ ձեռն (ընձեռնել), ընդմիջել և այլն: Այս կապով ԱՐԵՎԱԿ – ում առկա է 13738 համատեքստ (գերակշռող մասը **ընդ որում** -ով). **Ընդ** որում, արտահանումն աճել է 10,5ով եւ կազմել 47,8 մլն դոլար, իսկ ներմուծումն աճել է 1,7 ով եւ կազմել 117,4 մլն դոլար (Նոյան տապան, 2006.02.21): Բացի նշված տվյալներից, ունենք այդ կապի աշխուժացման այլ տվյալներ. օրինակ, Արմնյուզ հեռուստաալիքի հաղորդավար Աբրահամ Գասպարյանը ամեն օր իր հաղորդումն ավարտում է «**Բարին ընդ ձեզ**» արտահայտությամբ (այս պարագայում, անշուշտ, իր դերն ունի նրա՝ սիրիահայ լինելը): Մեկ այլ օրինակ՝ ԱՐԵՎԱԿ-ից. (...նա լցրեց

²⁷ Ն. Ա. Սարգսյան, սփյուռքահայերի 1946-1946 թթ. Մեծ հայրենադարձը, Ե., հեղ. հրատ., 2014, էջ 198:

²⁸ Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976, էջ 399:

բաժակները) օտարներուն տալու տեղ, ավելի լավ չէ՞ իր եղբայրներուն օգնության ձեռք պարզել ... վասնզի « **ընդ** աստեղոք ի՞նչ կա սիրուն, քան զանցկալի ... (այստեղ պարոն Գևորգը լռեց, վերցրեց բաժակը և մնացած երկու բառը արտասանեց երգելով) եղբայր ա՛ - նու՛ն...» (Գ. Մահարի, Այրվող տափաստաններ):

Ըստ որում, **ընդ** կապի շարադասությունը ոչ միայն նախադաս է, այլև միջադաս՝ ակն ընդ ական, անընդհատ, մեջ ընդ մեջ, մերթ ընդ մերթ, մեկ ընդ միշտ, որոտընդոստ, տողընդմեջ ²⁹ և այլն, ինչի մասին որևէ դասագրքում կամ աշխատության մեջ չի հիշատակվում. (Քոլոսիկի կողմից **մերթ ընդ մերթ** լսվում էր մի բարակ մանկական կանչ. «Արինոքի ընկո՛ւյզ, երկու ցորեն, մեկ ընկո՛ւյզ» (Խ. Դաշտենց, Խողեղան)):

Նույնը վերաբերում է **ըստ** կապին. սա էլ թվարկվում է նախադրությունների մեջ՝ դրանց՝ իսկական կապեր տեսակի մեջ: «Գործ է ածվում տրական հոլովի հետ և նշանակում է **համաձայն, համեմատ՝** ըստ իմ կարծիքի, **չափով, համեմատությամբ՝** ըստ պահանջի, **բաշխման կարգը՝** նստեցին ըստ տարիքի, **որոշ մտտեցմամբ՝** ըստ ամենայնի և **դատելով, նայելով՝** ըստ երևույթին» ³⁰ : Արևմտահայերենում՝ մի ըստ միոջէ (մեկը միւսին ետեւէն)³¹:

Դատելով ԱՐԵՎԱԿ-ի նյութերից՝ այս կապն ավելի գործածական է. 99526 համատեքստ կա, որոնցում այն հանդես է գալիս իր բազմապիսի իմաստներով (այստեղ էլ գերակշռում է **ըստ էության** կապակցությունը) (Սա **ըստ** էության չի հերքում ԵՊՀ-ն, սակայն վերջինս չի ուզում նկատել, որ դիմումատուն պարզապես բակալավր է, եւ ոչ դիպլոմավորված մասնագետ (Առաւոտ, 2005, 09.27), **Ըստ** Ջոն Էվանսի, կարծես թե Թուրքիայի խաղաղապահներ Ղարաբաղյան գոտում չեն լինի (Ազգ, 2006, 02.04)):

Այս կապը ևս շարադասական երկակի բնույթ ունի. նախադաս՝ ըստ արժանվույն, ըստ ամենայնի, ըստ կարգի, ըստ իս, ըստ պատշաճի, ըստ որում, ըստ երևույթին, ըստ էության, ըստ նախատեսվածի և այլն. ընդ որում, դրա անջատ գրության ձևերը հոծ գրության զուգահեռներ գրեթե չունեն ինչպես **ընդ**-ի դեպքում: Ունի մի քանի, բայց գործածական միջադաս գրության օրինակներ՝ **անըստգյուտ, օրըստօրե, ինքնըստինքյան:**

«**Ձ**, գրաբարյան նախդիր, որ գործածվում է արևմտահայերենում դերանունների հայցական հոլովի հետ (զայն, զինքն, գոր ևն)» ³²՝ վկայված է էդ. Աղայանի բառարանում:

Ստ. Մալխասյանցն այն համարում է «գրաբարյան նախդիր, որ պահպանվել է մասամբ մի քանի բարբառների մեջ և գործ էր ածվում՝ 1. որոշյալ հայցականի վրա՝ զնա, զնոսա, զերկիր, զերկին, 2. սեռականի հետ՝ **տեղը** ցույց տալու իմաստով՝

²⁹ Կարօ Առաքելեան, Արդի հայերենի քերականություն, ԱՍ գիրք, Պէրոյթ, 1998, էջ 121:

³⁰ Տե՛ս էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976, էջ 409:

³¹ Կարօ Առաքելեան, Արդի հայերենի քերականություն, ԱՍ գիրք, Պէրոյթ, 1998, էջ 119:

³² Տե՛ս էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976, էջ 359:

զգետնի, զքարի, 3. բացառականի վրա՝ **մասին** իմաստով՝ զնմանէ, զքէն, 4. գործիականի վրա՝ **մոտերքը, շուրջը** իմաստով՝ զՔասախ, զհարաւով, և վերջին՝ 5-րդ իմաստով՝ իբրև բառակերտ, բայակերտ մասնիկ՝ զանազան նշանակություններով՝ **զգետնէլ**, զիջանէլ, զայրանալ, զարմանալ, զառանցել և այլն»³³: Միայն **զգետնէլ**-ով ԱՐԵՎԱԿ-ում 10 համատեքստ կա, ինչպէս, օրինակ, Աջակողմյան քանդակը ներկայացնում է երկու ձիավորներ դեմ դիմաց, իսկ աջ կողմինը տեգով **զգետնէլ** է մի հսկա վիշապ (Հայկական էտյուդներ, Ավետիսյան Կամսար, 1979):

Իմաստունին, ոչ, **զգետնէլ** չեն կարենա

Ոչ մի հրեշ ու ոչ մի դև զարմանալի (Բանաստեղծություններ, մաս 1, Հ. Սահյան): Տիկին Դելմարի կողքին տեսնում էր սոսկ սըր Ռալֆին, որն իր չոր ու սառը դատողութեամբ հանդգնում էր հարձակվել իր՝ բարձրաշնորհ մարդու վրա, որ այնքանազնվակա և ախոյանների էր **զգետնէլ** (Ինդիանա, Սանդ ժորժ, 1990):

Այս վերջին կիրառությունն աշխուժացավ Արցախյան (2020թ) հայրենական պատերազմի օրերին. Հայ հերոս զինվորները **զգետնեցին** թշնամու բազմաթիվ անօդաչուներ (մամուլ):

Զ նախդիրը ևս ունի մի քանի, բայց շատ հաճախական միջադաս կիրառություն, օրինակներ՝ **հետզհետե, գույնզգույն**

(Նրա դեմքի արտահայտությունը **հետզհետե** փոխվում է, Անձրև է սկսվում Պիեսներ, Մարոյան Վիլյամ, 1988):

Ց կապի մասին էդ. Աղայանի բառարանում շատ հակիրճ տեղեկություն կա. «զրաբարյան նախդիր, որ ժամանակակից հայերենում գործածվում է նախածանցի դերով՝ մինչև նշանակությամբ (օր. ցմահ, ցմրուր, ցտեսություն, ցնոր, ցկեանս, ցմրուր ևն)»³⁴:

Այն կիրառական է կայուն կապակցություններում՝ շատ որոշակի դեպքերում և ի տարբերություն մյուս կապերի՝ նորակազմություններ գրեթե չի ստեղծում³⁵.

դրանցից են՝ ցայգ, ցարդ, ցայժմ, ցայսօր, ցմրուր, ցտեսություն, ցպահանջ, ցմահ, ցքսան, ցտարի, ցորժամ, ցորչափ, ցորքան (վերջին հինգը՝ անկիրառելի):

Գործածական է **ցպահանջ**-ը (հատկապես փոսատային առաքումների բառապաշարում), որով ԱՐԵՎԱԿ-ում 521 համատեքստ կա. Դրամով **ցպահանջ** ավանդները նվազել են 390 մլն դրամով եւ կազմել են 47 մլրդ 604 մլն դրամ (Ազգ, 2006, 08.17): Քաղ. օր-ը նախատեսում է ավանդի երկու տեսակ՝ **ցպահանջ** և ժամկետային (ՀՀ քաղաքացիական իրավունք Բարսեղյան Տարիել, Հայկյանց Արմեն, Ղարախանյան Գեղամ, Մեղրյան Սերգեյ 2001):

³³ Ստեփան Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*. Երեւան: Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչություն, 1944, էջ 639:

³⁴ Տե՛ս էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976, էջ 1466:

³⁵ Որպէս բացառություն՝ սկսել է հաճախանալ **զայսօր** կազմությունը՝ «20-րդ դարի վերջից սկսած զայսօր Ադրբեջանի պատմաբաններն ու մտավորականները ակտիվացրել են պատմության կեղծարարության գործընթացը», Ն. Ա. Մարգարյան, սփյուռքահայերի 1946-1946 թթ. Մեծ հայրենադարձը, Ե., հեղ. հրատ., 2014, էջ 217:

Սկսել է գործածական դառնալ նաև **ցմրուր**-ը. դրանով 32 համատեքստ կա ԱՐԵՎԱԿ-ում՝ ինչպես հին (ավետարանական), այնպես էլ 20 և 21-րդ դարի տեքստերում, նաև՝ թարգմանական: - Ինչ որ մի պահի ինքն այլևս իր տերը չէր. բոլորն էլ խմում էին, բայց ամեն անգամ **ցմրուր** դատարկողը միայն ինքն էր (Ռ. Դավոյան, Եթե Աստված կամենա): Չորս կողմից ենթարկվում էի դաժան հետապնդումների, և ոմանց թվաց, թե բաժակն արդեն խմել եմ **ցմրուր**, թե վերջս արդեն եկել է, և ես անվերադարձ անցել եմ մոռացված միջակությունների շարքը (Շ. Ազնավուր, Քանի սիրտս բաբախում է, Նյու մեգ, Ե., 2020, էջ 105): ...Ֆրանսական հոգատարութեան տակ ապրող Սուրիայէն մինչև մեծապետական կռուախնձոր Լիբանան, Դաշնակցութիւնը **ցմրուր** ճաշակած է արատաւոր պայմաններու մէջ գործելու պատշաճեցման դառն բաժակը, բայց դաշնակցական կազմաւորման ու նկարագրի տէր իր ղեկավար գործիչներու շնորհիւ միշտ ալ կարողացած է վերականգնել արժէքային իր համակարգը (Հայրենիք, 2006.06.30):

Եզրակացություն: Գրաբարից մեզ հասած **առ-**, **ընդ-**, **ըստ-**, **ի(յ)-**, **զ-**, **ց-** նախդիրները պետք է դասվեն կապ խոսքի մասի մեջ ըստ Մ. Աբեղյանի և նրա որոշ համախոհների, որոնք այդ իսկ անվանմամբ պետք է ընդգրկվեն երկու գրականների քերականական դասընթացներում. դրանք, ինչպես ցույց տվեցին բազմաբնույթ և մեծաթիվ նյութերի դիտարկումները, կիրառման աշխուժացում են դրսևորում նաև արևելահայերենում՝ յուրաքանչյուրն իր հերթին ու չափով նպաստելով խոսքի ճոխացմանն ու գեղեցկացմանը: Բացի այդ, թվարկվածներից առաջին երեքը՝ **առ-**, **ընդ-**, **ըստ-** կապերը (մասամբ նաև **ի-**ն և **զ-**ն), ըստ դիրքի կամ շարադասության, **երկդրություններ** են (նախադիր և միջադիր իրենց գործառույթով):

Ս. Տիոյան

Հայերենի նախդիրները

Ամփոփում

Հայերենի **առ-**, **ընդ-**, **ըստ-**, **ի(յ)-**, **զ-**, **ց-** նախդիրները պետք է դասվեն կապ խոսքի մասի մեջ ըստ Մ. Աբեղյանի և նրա որոշ համախոհների, որոնք այդ իսկ անվանմամբ պետք է ընդգրկվեն երկու գրականների քերականական դասընթացներում. դրանք, ինչպես ցույց տվեցին բազմաբնույթ և մեծաթիվ նյութերի դիտարկումները, կիրառման աշխուժացում են դրսևորում նաև արևելահայերենում՝ յուրաքանչյուրն իր հերթին ու չափով նպաստելով խոսքի ճոխացմանն ու գեղեցկացմանը: Բացի այդ, թվարկվածներից առաջին երեքը՝ **առ-**, **ընդ-**, **ըստ-** կապերը (մասամբ նաև **ի-**ն և **զ-**ն), ըստ դիրքի կամ շարադասության, **երկդրություններ** են (նախադիր և միջադիր իրենց գործառույթով):